## § 44.Նյարդային համակարգի կառուցվածքը և գործառույթը



*2.* Խմբավորե՛ք նշված **գործընթացներն ըստ նրանց կարգավորման**, և համա-պատասխան տառերը տեղադրե՛ք աղյուսակում (օգտվե՛ք նկ. 88-ից):

| | |
|---|---|
| Սիմպաթիկ ՆՀ | ա) |
| Պարասիմպաթիկ ՆՀ | լ) |

*ա) Միզապարկի մկանների թուլացում*
*բ) Ստամոքսի մարսողական գործընթացի ակտիվացում գ) Մարսողական*
*գեղձերի ակտիվացում*
*դ) Սրտի անոթազարկի հաճախացում:*
*ե) Միզարձակման ակտիվացում զ) Անոթազարկի*
*թուլացում*
*է) Աչքի բբի լայնացում*
*ը) Լեղարտադրության ակտիվացում թ) Թքազատության*
*ուժեղացում*
*ժ) Միզապարկի պատերի կծկում ի) Բրոնխների*
*պատերի կծկում*
*լ) Ադրենալինի արտադրության թուլացում:*

*3.*Ծայրամասային նյարդային համակարգերի համեմատություն**:** Տ ե տ ր ո ւ մ լրացրե՛ք աղյուսակը:

| N | Առանձնահատկությունները | Մարմնական ՆՀ | Վեգետատիվ ՆՀ |
|---|---|---|---|
| 1. | Կենտրոնները գտնվում են ողնուղեղի սրբանային հատվածում: | | |
| 2. | Նյարդաթելերը հաստ են: | | |
| 3. | Կարգավորում է ներքին օրգանների աշխատանքը: | | |
| 4. | Կարգավորում է սրտի մկանների աշխատանքը: | | |
| 5. | Կարգավորում է միջաձիգ զոլավոր մկանների աշխատանքը: | | |
| 6. | Ունի հատուկ կենտրոնաձիգ ուղի: | | |
| 7. | Կարգավորում է մարդու կամքից կախված մկանների կծկումը: | | |
| 8. | Կարգավորում է անոթների կծկումը: | | |
| 9. | Կարգավորում է կմախքի մկանների աշխա- տանքը: | | |